

«Հայաստանի Հանրապետության Ինտերնետ Կառավարման Համաժողով»

Միջգերատեսչական խմբի նիստի

ք. Երևան

24 նոյեմբերի 2016թ.

Օրակարգ՝

1. ArmIGF 2016 Ինտերնետ կառավարման համաժողովի ամփոփում:
2. Թիրախային գրոհները ժամանակակից անվտանգության պատուհաս, վիրտուալ միջավայրերի և տվյալների մշակման կենտրոնների անվտանգություն՝ Բուլատ Սիրան (Kaspersky Lab):
3. Ինչպես դիմակայել կիբերանվտանգության ոլորտում մարտահրավերներին՝ քննարկում և առաջարկությունների ներկայացում:
4. Այլ հարցեր:

Միջգերատեսչական խմբի անդամներից ներկա էին՝

1. Գագիկ Թադևոսյան, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
2. Արսեն Գաբրիելյան, ԱԱԾ
3. Գագիկ Մակարյան, ՀՀ գործատուների հանրապետական միություն
4. Գրիգոր Սաղյան, «Ինտերնետ Հանրություն» ՀԿ
5. Հովհաննես Նիկողոսյան, «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
6. Շաքե Մեժլումյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
7. Վլադիմիր Սահակյան, «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ

8. Տիգրան Չարգարյան, «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ

9. Տիգրան Հարությունյան, «Նոյան տապան հոլդինգ» ՍՊԸ

Նիստին մասնակցում էին նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կապի և տեղեկատվայնացման վարչության տեղեկատվայնացման բաժնի գլխավոր մասնագետ Արման Գալստյանը, ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ Վահագն Հարությունյանը, ԻԿՀ քարտուղարության անդամ Լիաննա Գալստյանը, Երևան քաղաքի առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցիչ Արթուր Կայֆեջյանը, «ԱրմենՏել» ՓԲԸ ներկայացուցիչներ Արթուր Ռաթնոսյանը և Արմեն Բադայանը, «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ ներկայացուցիչներ Կարապետ Բազրատունյանը և Դավիթ Ադամյանը, «Ջի Էն Սի-Ալֆա» ՓԲԸ ներկայացուցիչ Միսակ Խաչատրյանը և Էդվարդ Միլիտոնյանը, «Գլոբալ ԷսՓիՍի» ընկերության նախագահ Սամվել Չաքարյանը, «Կասպերսկի Լաբորատորիա» տարածքային ներկայացուցիչ Արմեն Կարապետյանը, «Կասպերսկի Լաբորատորիա» ընկերության ներկայացուցիչներ Ալեքսեյ Կիսելևը, Բուլատ Սիրանը և Ալեքսեյ Գորելկինը:

Նիստից բացակայում էին միջգերատեսչական խմբի անդամներ Լուսինե Սարգսյանը, Անդրանիկ Ալեքսանյանը, Դավիթ Սանդուխյանը, Սամվել Հովսեփյանը, Հայկ Չոբանյանը, Կարեն Գասպարյանը, Սամվել Մարտիրոսյանը, Լիաննա Դոյրոյանը և Բորիս Նավասարդյանը՝ հարգելի պատճառներով:

Միջգերատեսչական խմբի ղեկավարն առաջարկեց քննարկել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ առաջարկություններ չներկայացվեցին խմբի անդամների կողմից: Օրակարգը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Քննարկվեց՝

1. Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց ԻԿՀ քարտուղարության անդամ Լիաննա Գալստյանը, մասնակիցներին տրամադրվեց սմթժ հոկտեմբերի 5-ին կայացած ArmIGF 2016 երկրորդ հայկական Բնտերնետ կառավարման համաժողովի տպագիր զեկույցը:

Լիաննա Գալստյանը լիազորվում է ներկայացնել ԻԿՀ-ն համաշխարհային ԻԿ Ֆորումին; որը տեղի կունենա սմթժ դեկտեմբերի 6-9 Մեքսիկայում: Առաջարկվեց, որ ԻԿ Ֆորումին մասնակցությունից հետո Լ. Գալստյանը ներկայացնի ֆորումի մասնակցության մասին զեկույց:


2. Ելույթ ունեցան «Կասպերսկի Լաբորատորիա» ընկերության ներկայացուցիչները՝ ներկայացնելով իրենց ընկերության լուծումները կիրառական տեխնոլոգիայի ոլորտում:

3. Քննարկման ընթացքում նշվեց, որ օրենսդրական բազան և նորմատիվ փաստաթղթերը կիրառանվտանգության ոլորտում հետևում են Ինտերնետի զարգացմանը, ինչի հետևանքով կիրառվում է լավագույն փորձի օգտագործման վրա հիմնված մոտեցումներ: Առաջարկվեց աշխատանքային գործնական քայլեր իրականացնել և կազմավորել «Կասպերսկի Լաբորատորիա» ընկերության մասնագետների ներառմամբ փորձագետների աշխատանքային խումբ, որը կառաջարկի կիրառանվտանգության ապահովման պետական կենտրոնի ստեղծման համար անհրաժեշտ մարդկային, ծրագրային և տեխնիկական ռեսուրսների ցանկ, ինչպես նաև կառաջարկի կիրառանվտանգության հայեցակարգի մշակման համար մոտեցումների առաջարկներ:

Որոշվեց՝

1. Լիազորել ԻԿՀ քարտուղարության անդամ Լիաննա Գալստյանին ներկայացնել ԻԿՀ-ն համաշխարհային ԻԿ Ֆորումին, որը տեղի կունենա ս.թ. դեկտեմբերի 6-9 Մեքսիկայում: ԻԿ Ֆորումին մասնակցությունից հետո հանձնաժողովին ներկայացնել ֆորումի մասնակցության մասին զեկույց:
2. Կազմավորել «Կասպերսկի Լաբորատորիա» ընկերության մասնագետների ներառմամբ փորձագետների աշխատանքային խումբ, ներգրավելով Գ.Սաղյանին, որը մինչև ս.թ. դեկտեմբերի 6-ը կառաջարկի կիրառանվտանգության ապահովման պետական կենտրոնի ստեղծման համար անհրաժեշտ մարդկային, ծրագրային և տեխնիկական ռեսուրսների ցանկ, ինչպես նաև կառաջարկի կիրառանվտանգության հայեցակարգի մշակման համար մոտեցումների առաջարկներ:

Նախագահ՝



Գագիկ Թադևոսյան

Քարտուղար՝



Գրիգոր Սաղյան